

ԳՅԱՆԵ ՉՈՓՈՒՐՑԱՆ

Վանաձորի պետական համալսարան
Հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասպիրանտ
gayanechopuryan17@mail.ru

**ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 12-16-ՐԴ ԴԴ.
ՀԱՅԵՐԵՆ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ամփոփում

Հայերեն վիմական արձանագրություններն արժեքավոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի, կենցաղավարման որոշ առանձնահատկությունների, այլև նրա լեզվամտածողության, լեզվական որոշ օրինաչափությունների վերաբերյալ:

Գրաբարյան լեզվական մի շարք իրողություններ արձանագրություններում ունեն յուրօրինակ արտահայտության ձևեր: Դրանցից սույն աշխատանքում ուսումնասիրել ենք գրաբարի՝ 12-16-րդ դդ. հայերեն վիմական արձանագրություններում (այսուհետ՝ Արձանագրություններ) հիշատակված ձայնավորների հնչյունափոխական այնպիսի արտահայտություններ, որոնք դրսևորվել են նորահայտ կազմություններում:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գրաբարի ձայնավորները (ա, ո, ե, է, ի, ու) Արձանագրություններում հնչյունափոխվել են՝ պայմանավորված ժողովրդախոսակցական լեզվի ներթափանցմամբ, այլ լեզուների փոխազդեցությամբ և արձանագրողների լեզվական որոշ իրողությունների ընկալման առանձնահատկություններով:

Ուսումնասիրության նյութը քաղել ենք «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի պրակներից¹:

¹ Դիվան հայ վիմագրության, 1960, Պ. 2, **Գորիսի, Միսիանի և Ղափանի շրջաններ** (Գլխ. խմբ.՝ **Հ. Օրբելի, հատորի խմբ. Բ. Առաքելյան**), Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 242:

Դիվան հայ վիմագրության, 1967, Պ. 3, Վայոց Ձոր, Եղեգնաձորի և Ագիզեկովի շրջաններ (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան) Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 430:

Դիվան հայ վիմագրության, 1982, Պ. 5, Արցախ (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 348:

Դիվան հայ վիմագրության, 1996, Պ. 7, Ուկրաինա, Մոլդովա (Կազմ.՝ Գ. Գրիգորյան), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 410:

Դիվան հայ վիմագրության, 2012 Պ. 9, Լոռու մարզ (Կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղունյան), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 612:

Բանալի բառեր և արտահայտություններ. հնչյունափոխություն, ա, ո, ե, է, ի, ու ձայնավորներ, բառաձև, ձայնավորի սղույմ, անկույմ, այլ հնչյունի վերածում:

Ներածություն

Վիմական արձանագրությունների հնչյունաբանությանը ամբողջությամբ անդրադարձել է Ս. Ավագյանը «Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն» աշխատության մեջ², որը նվիրված է 10-14-րդ դարերի վիմագրությունների հնչյունական իրողությունների քննությանը՝ ըստ «Դիվան հայ վիմագրության» առաջին երեք պրակների, և հավաքական գործունեություն իրականացրած որոշ բանասերների վերծանած անտիպ արձանագրությունների³:

Վիմական արձանագրությունների հնչյունական փոփոխություններին անդրադարձել են նաև Ս. Ղազարյանը «Միջին հայերեն» մենագրության առաջին մասում⁴, Հ. Մուրադյանը «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմություն» և «Հայոց լեզվի պատմական քերականություն» աշխատություններում⁵, սակայն որոնցում ամբողջությամբ չեն արտացոլվում վիմական արձանագրությունների հնչյունական իրողությունները. նրանցում առկա լեզվական վկայությունները հիմք են դառնում միջին հայերենի հնչյունական իրողությունները վերհանելու և պարզաբանելու համար:

Առկա են նաև առանձին փոքրածավալ քննություններ⁶, որոնցում միջինհայերենյան հնչյունական իրողությունների ուսումնասիրությունը թեև սահմանափակվում է կոնկրետ տարածաշրջանով կամ ընդգրկման ժամանակահատվածով, սակայն նպաստում է քննվող հարցի համալիր ուսումնասիրմանը:

² Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Ե., 1973:

³ Դեռևս այն ժամանակ անտիպ գործերը տեղ են գտել հետազայում հրատարակված նշված մատենաշարի պրակներում:

⁴ Ղազարյան Ս., Միջին հայերեն, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Ե., 1960:

⁵ Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ե., 1982:

⁶ Խաչատրյան Գ., Անձնանունները Կամենիցի հայկական դատարանի արձանագրություններում (XVI դ.), պատմաբանասիրական 2020, № 1:

Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957:

Ղաֆադարյան Կ., Հովհանավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948:

Չոփուրյան Գ., Անցյալ կատարյալի արտահայտությունը միջինհայերենյան արձանագրություններում, «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», Պրակ Ա, Ե., 2020, 45-56:

Սույն աշխատանքում մեր նպատակն է ուսումնասիրել ձայնավորների կրած փոփոխությունները, որոնք տեղ են գտել 12-16-րդ դարերի հայերեն վիմական այն արձանագրություններում, որոնց ամբողջությամբ կամ մասամբ չի անդրադարձել Ս. Ավագյանը՝ «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի նոր հատորներով համալրվելու և այլ ժամանակահատվածի արձանագրությունների անդրադառնալու պատճառներով: Դրանով պայմանավորված՝ հոդվածում առկա են հնչյունափոխության ենթարկված այնպիսի բառեր, որոնք նորահայտ արտահայտություններ են և դուրս են մնացել նախորդ շրջանի ուսումնասիրողների տեսադաշտից:

Մեթոդաբանությունը

«Դիվան հայ վիմագրության» մատենաշարը ընդգրկում է տասը պրակ, որոնցից անդրադարձել ենք յոթին, ուստի առաջնահերթ կատարել ենք քարտագրական աշխատանք: Արձանագրությունների լեզվական որոշ իրողությունների համակողմանի քննության համար օգտագործել ենք նկարագրական և համեմատության մեթոդները:

Արձանագրություններում վկայված հնչյունական իրողությունների քննության համար կարևոր է դրանց արձանագրման տեղի և ժամանակի հանգամանքները, որոնք ներկայացված են հիշյալ մատենաշարում: Ինչպես արձանագրում են վիմագրագետները, արձանագրողը, մի վայրից մեկ այլ վայր տեղափոխված լինելով, կարող է ստեղծել տվյալ վայրին անձանոթ կազմություններ, ուստի վիմական արձանագրությունների մեջ հանդիպող լեզվական երևույթները միշտ չէ, որ պետք է վերագրել տվյալ վայրի բարբառին կամ խոսվածքին: Բազմաթիվ են նաև ուղղագրական սխալները և արձանագրողի վրիպումները, որոնք առաջին հայացքից կարող են տարբերվել և շփոթ առաջացնել⁷:

Արձանագրություններում հանդիպում են ձայնավորների հնչյունափոխական տարբեր դրսևորումներ, որոնցից մենք ստորև կանդրադառնանք անկման, սղման և այլ հնչյունի վերածման

⁷ Ինչպես Ա. Այտընյանն է նշում. « արձանագրութեանց մէջ լեզուն խառնադանձ ռամկին խօսածէն անտարակոյս քիչ մը վերագոյն, բայց հասարակօրէն գրչին ու քանդակողին գիտութեանը կամ տգիտութեանը յանձնուած. յաճախ ուղղագրութեան սխալները, ամէն տեղ և ամէն ատեն միաձև միօրինակ և իբր թէ ժառանգական եղած են: Այս գրութիւններուն, այս անհարթ և անաուեստ բարբառոյն նկարագիրն է տեսակ մը կոշտութիւն, անմիօրինակութիւն և օտարութիւնք» (Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, 141-142) :

հնչյունափոխական իրողություններին: Ձայնավորների հնչյունափոխական արտահայտությունները հիշատակված են ն՝ հատուկ և՝ հասարակ անուններում:

Նշված հնչյունափոխական երևույթներից սղումը և անկումը, տարբերակելով միմյանցից, առաջինը համարում ենք վանկարար ձայնավորի, մյուսը՝ առանց վանկարար ձայնավորի հավելմամբ պայմանավորված փոփոխություն:

1. Ա ձայնավորի հնչյունափոխություն

1.1. Ա-ի անկում և սղում: Միջին հայերենի ա ձայնավորի մասին Հ. Մուրադյանը գրում է. «Արդեն պատմական շրջանում սկսել է ընդհանրանալ նախաշեշտ վանկերի ա-ի արտասանության թուլացումը, և քանի որ տվյալ դեպքում ա-ի կորուստը կամ փոփոխությունը չի անդրադարձել բառիմաստի շփոթման վրա, ուստի և այն ընկել կամ սղվել է»⁸: Ա ձայնավորը սղվել է *Սևաղա* անձնանվան բացառական հոլովի կազմության ժամանակ շեշտակիր *է* հոլովակերտից առաջ, օրինակ՝ հողն ի **Սեաղէ** գնեցի [ԴՀՎ 5, 32]⁹, որում սղվել է նաև *յ* ձայնակապը:

Բառակզբում ա ձայնավորը չի նշույթավորվում հատուկ անուններում: Այսպես՝ *Առաքել* հատկանունը Ուկրաինայի տարածաշրջանի Արձանագրություններում գրվում է *Ռաքել* «Ես Քրիքոր **Ռաքել**»¹⁰ին (Գրիգորի պապը) թոռն եկի մանքուման » [ԴՀՎ 7, 1571, 153] կառույցում, որում արևմտահայ բարբառների ազդեցությամբ ընդգծված անձնանունը հատկացուցչի պաշտոնում արտահայտվել է հետադաս շարադասությամբ և ն հոդով: Անձնանվան նշված ձևը արձանագրություններում մեկ անգամ է կիրառվել, ընդ որում՝ *ել* հնչյունակապակցությունը վերականգնվել է վերծանողի կողմից:

Բառամիջում չի նշույթավորվում -*աւոր* վերջածանցի ա ձայնավորը, որին հաջորդող *ւ* հնչյունը փորագրվել է ու՝ գրաբարյան ուղղագրության հիմունքով¹¹՝ **կրանուորացն** Ղազարին և Թաթեոսին [ԴՀՎ 7, 1442, 97], ՄԲ նշանքս բարեխօս է Յովհաննէսին, **Շնոֆոր** Խաթունին և ծնողացն Վարդերին, Մարինէ, Մարթային [ԴՀՎ 8, 1458, 136]: Ս. Ավագյանը բերում է *թագաւոր* բառի *թագւոր* կազմությունը¹²:

⁸ Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ե., 1982, 74:

⁹ [] փակագծերում նշում ենք «Դիվան հայ վիմագրության» մատենաշարը՝ ԴՀՎ հապավմամբ, այնուհետև՝ պրակի համարը, արձանագրության ժամանակը և էջը:

¹⁰ Օրինակներում առկա վերականգնումները նշում ենք () փակագծերում:

¹¹ Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Ե., 1973, 150:

¹² Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 90:

1.2. Արձանագրություններում *ա>ը* հնչյունափոխություն հանդիպում է բառակազմում և բառամիջում, սակայն մենք նշում ենք բառամիջյան *ա-ի* հնչյունափոխության օրինակներ՝ Հանգիստա **տպանս** Նազարին [ԴՀՎ 8, 1537, 124] Բաժակ *ի Մճոկածորո* [ԴՀՎ 3, 1308, 35], շինեցի **տակոպետոց** և լցի ամանով և ետու յառաջնորդութեան Սամուելի [ԴՀՎ 9, 301, 13-րդ ԴՀՎ], որոնցից առաջինում (տպանս) *ա* ձայնավորի բացթողում է՝ վկայված միայն Թաթարիայի Մեծ Բուլղար քաղաքի Արձանագրություններից մեկում. այլ կիրառություններում բառս անհնչյունափոխ է: *Մճոկածորո*¹³ բառաձևում, որի ելակետային ձևն է *Մաճառակաձոր*¹⁴, գրանցվում է երեք *ա* հնչյունների փոփոխություն, որոնցից առաջինը և երկրորդը վերածվում են (ը)-ի, իսկ վերջինը սղվում է, սակայն ենթադրելի է նաև *Մըճըրըկաձոր* արտասանությունը: Իսկ *տակոպետոց* բառաձևում նկատվում է երկու *ա* հնչյունների փոփոխություն, որոնցից առաջինը վերածվում է (ը)-ի, երկրորդը՝ սղվում: Այս դեպքում ևս ենթադրելի է նաև *տակըրպետոց* արտասանությունը:

Ս. Ավագյանը նշում է այլ օրինակներ ևս, որոնց մի մասը համարում է հին հայերենի *ա* ձայնավորի սղման արտահայտություններ, ինչպես՝ *Նարգիս>Նըջիս* (նաև՝ Նճիս, Նջիսին), *Սահակ>Սհակալ*¹⁵ և այլն:

2. Ո ձայնավորի հնչյունափոխություն

Ի տարբերություն մյուս ձայնավորների՝ Արձանագրություններում ամենաքիչ փոփոխությունների է ենթարկվել *ո* ձայնավորը:

2.1. **Ո>ու** հնչյունափոխություն: Ոչ միայն Արձանագրություններում, այլև ձեռագիր հիշատակարաններում ևս բառամիջյան արմատական *ո* ձայնավորը հանդիպում է *ու* գրությամբ՝ նորոգեցաւ **կաթուղիկէս** Սբ [ԴՀՎ 9, ՈԼԳ-1184, 110], **ծնուղաց** մերոց [ԴՀՎ 5, 74]:

2.2. **Ո>ե/է** հնչյունափոխություն: Այն հիմնականում հանդիպում ենք *Յովհաննէս* անձնանվան *Եւանէս*, *էհանիս* բարբառային կամ խոսակցական տարբերակներում, որոնց մասին հանգամանորեն խոսել է Ս. Ավագյանը¹⁶: Բերված անձնանունից բացի մեզ հանդիպել է նաև *Յովասափ* անձնանունը *Էւասափ* ձևով՝ ՍԲ խաչս բարեխաւս Գրիգորին, **Էւասափին** [ԴՀՎ 9, 1220,

¹³ Բարխուդարյանը *ո* ձայնորդից հետո հավելել է **ա** ձայնավոր՝ չանելով համապատասխան նշում: Այլ աղբյուրներում տեղանունը հիշատակված է նաև *Մաճառակաձոր*, *Մաճոակա ձոր*, *Մաճոակաձոր*, *Մճոակաձոր*, *Մճոկաձոր* տարբերակներով:

¹⁴ Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986, 664:

¹⁵ Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 92-93:

¹⁶ Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 136-137:

497]: Անվան նշյալ ձևը հաճախադեպ է Լոռու տարածաշրջանի վիմագրություններում:

3. Ե ձայնավորի հնչյունափոխություն

3.1. Ե ձայնավորը Արձանագրություններում հանդիպում է բազմաթիվ հնչյունափոխական արտահայտություններով, սակայն, որպես չհիշատակված օրինակ՝ բերում ենք *Գոհարսէլիք* արական անձնանունը *է > (ը)* փոփոխությամբ՝ վկայված միայն Լոռու տարածաշրջանի Արձանագրություններում, ինչպես՝ Ես՝ **Գոհարմիքս**, թոռն Համազասպանց, միաբանեցա Աստուածածնիս էտու արդինս [ԴՀՎ 9, 1258, 39], ճգնաւոր **Գոհարմիք** [ԴՀՎ 9, 1258, 69]¹⁷:

3.2. Ե ձայնավորի երկբարբառային արտասանությունը «անձանոթ» է ոչ միայն գրաբարին, այլև միջին հայերենի գրական երկերին: Արդի մի քանի բարբառներում սակավաթիվ բառերում նկատվում է այդ փոփոխությունը (Մեղրի, Ագուլիս)¹⁸, որը սակայն առանձնակի է և չի տարածվում այդ կարգի բոլոր բառերի վրա¹⁹: 12-16-րդ դարերի վիմական արձանագրություններում պահպանվել են նման հնչյունափոխության մի քանի արտահայտություններ: Այսպես՝ Միայբան եղբարքս հաստատեցին ի տարին :Բ: ւար ժամ բուն **Բարայկենդանին** Սարքսոնին և իւր կենայկցին ու Սիրադեղին [ԴՀՎ 9, 461]:

4. Է ձայնավորի հնչյունափոխություն

4.1. Է-ի անկում: Արձանագրություններում է ձայնավորը չի նշուրավորվում *Վառվառե*²⁰ անձնանվան մեջ, ինչպես՝ ՍԲ նշանքս բարէխաւս են Խելօքին, **Վառվառին** (Վառվառե/Վառվառէ) [ԴՀՎ 7, 1454, 45]:

4.2. Է>ի հնչյունափոխություն: Այս հնչյունափոխությունը հիմնականում դիրքային է, սակայն վիմագրություններում հանդիպում են հատկանունների անշեշտ է ձայնավորի *ի*-ի վերածման դեպք նույնպես՝ Ես **Անդրիաս** կանգնեցի զխաչս հոգո իմո[ԴՀՎ 2, 2ԺԸ, 29]:

5. ՈԻ ձայնավորի հնչյունափոխություն

5.1. Ու>ի փոփոխություն վկայվում է Լվովի արձանագրությունների *յինվարին* բառաձևում՝ Հայոց թվին յամսեանն **յինվարին** խոճա Անդրէաս


¹⁷ Ղաֆադարյանը նշում է, որ արձանագրություններում խոսքը հավանաբար նույն անձի մասին է:

¹⁸ Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 243.
<http://tert.nla.am/archive/armbook/hay%20barbaragitutyun-1953.pdf>

¹⁹ Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 107:

²⁰ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Ե., 1942, 42:

Կաֆայեցի [ԴՀՎ 7, 1571, 195], որը սխալագրության հետևանք չենք համարում՝ պայմանավորված հետագա դարերի ամսագրերում ամսանվան նշյալ ձևով վկայված լինելով: Օրինակ՝



21

Ու>ի փոփոխության մեկ այլ օրինակ հանդիպում է նաև Լոռու Թումանյանի շրջանի՝ 13-րդ դարի արձանագրություններից մեկում՝ հիշատակված *հեջուպ*²² բառում, որ նշանակում է «սենեկապետ»²³: Օրինակ՝ Կամաուն ԱՅ ես՝ Ջաղել ամիր **հեճիպս**, միաբանեցա ՍԲ Աստուածածնիս [ԴՀՎ 9, 77]:

6. Ի ձայնավորի հնչյունափոխություն

6.1. *Ի>ու* հնչյունափոխություն: Արձանագրություններում *ի>ու* հնչյունափոխություն վկայված է *Միքայել* և *Սարիբեգ*²⁴ անձնանուններում՝ ՍԲ նշանքս բարեխօս է պարոն Խորլուպեին և կողակցին Ազիզ Մելիքին և հօրն պարոն **Սարուպեին**, Ղազարին [ԴՀՎ 7, 1451, 45], Գրիգորն, **Մուքայիլն**, հարապետ հեոց իշեցեք [ԴՀՎ 3, 1567 18]: Նշված անձնանունները վկայված են ՀԱԲ-ի համապատասխանաբար *Սարիբեգ* և *Միքայել* բառահոդվածներում՝ որպես փաղաքշական ձևեր²⁵:

6.2. *Ի>է* հնչյունափոխություն հիշատակված է «Հետ վախճանի իմ, հայր Պանդալս և միայբանքս հաստատեցաք **Բարդաղեմոսի** տաւնին ամեն եկեղեցիքս պատարագն Սարգսի, կեսն ամուսնի իր [ԴՀՎ 9, 326]» օրինակում, որը, կարծում ենք, սխալագրության հետևանք է:

Արձանագրություններում հնչյունափոխության ենթարկված նորահայտ բառերը, ի համեմատություն Ս. Ավագյանի վերոնշյալ աշխատության, մի դեպքում խորթ են ոչ միայն միջինհայերենյան գրականությանը, այլև վիմական արձանագրություններին, մյուս դեպքում վերհանում են կա՛մ իրենց կոնկրետ կիրառական դաշտում լինելու սահմանափակումները կա՛մ էլ վրիպումներ ու բացթողումներ են:

²¹ Սուրհանդակ Բիզանդեան, լրագիր տերութեանն Օսմանեան, <https://arar.sci.am/dlibra/publication/296162/edition/271778/content>

²² Միջին հայերենի բառարանում՝ *հեճուպ* կամ *հեճպի* ձևերով: Տե՛ս Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009, էջ 423:

²³ <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26>, ՆՀԲ, 87:

²⁴ *Սարիբեգ* բառահոդվածում անվան հնագույն վկայությունները 1602թ. է, իսկ *Սարուպեկ* տարբերակը անթվական է (ՀԱԲ, հ. 4, c. 1, 460-461):

²⁵ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 356, 461:

Եզրակացություն

Ուսումնասիրելով 12-16-րդ դարերի վիմական արձանագրություններում հնչյունափոխության ենթարկված նորահայտ բառերը, որոնք տեղ չեն գտել նախորդ շրջանի ուսումնասիրողների մոտ, մի դեպքում խորթ են ոչ միայն միջինհայերենյան գրականությանը, այլև վիմական արձանագրություններին, մյուս դեպքում վերհանում են իրենց կոնկրետ կիրառական դաշտում լինելու սահմանափակումները կամ էլ բացթողումներ են: Սրանք հնչյունափոխվել են ոչ միայն հատուկ, այլև հասարակ անուններում:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գրաբարի ձայնավորները (ա, ո, ե, է, ի, ու) Արձանագրություններում հնչյունափոխվել են՝ պայմանավորված ժողովրդախոսակցական լեզվի ներթափանցմամբ, այլ լեզուների փոխադեցությամբ և արձանագրողների լեզվական որոշ իրողությունների ընկալման առանձնահատկություններով:

Այսպես՝ **Ա** ձայնավորը հնչյունափոխության է ենթարկվել **Սևադէ** (Արցախ), **Ռաք(ե)ին** (Առաքել անձնանուն), **կրաւոտրացն**, **Շնոֆոր**, **տպանս** (Ռուսաստան), **Մճոկածորո** (Վայոց ձոր) տակնալետոց (Լոռի) բառաձևերում, **Ո** ձայնավորը՝ **կաթուղիկէս** (Լոռի), **ծնուղաց** (Արցախ) **Էւասափ** (Լոռի) բառաձևերում, **Ե** ձայնավորը՝ **Գոհարմիքս**, **Բարայկենդանին** (Լոռի) բառաձևերում, **Է** ձայնավորը **Վառվառին** (Ուկրաինա), **Անդրիասին** (Գորիս) բառաձևերում, **Ու** ձայնավորը՝ **յինվարին** (Ուկրաինա) և **հեճիպս** (Լոռի) բառաձևերում, **Ի** ձայնավորը՝ **Բարդաղէմոսի** (Լոռի) բառաձևում:

Նշյալ բառաձևերը ոչ միայն վիմական արձանագրությունների, այլև միջին հայերենի համար օրինաչափ չեն, քանի որ վիմական արձանագրություններում ունեն կամ տեղային կամ ժամանակային սահմանափակություն: Դատելով վիմական արձանագրություններում պահպանված օրինակներից՝ ձայնավորները փոփոխվել են բարբառային կամ ժողովրդախոսակցական արտահայտություններում և արձանագրողի բացթողման հետևանք են:

Гаяне Чопурян

Чередование гласных в армянской эпиграфике 12-16 веков

Заключение

Ключевые слова и выражения: чередование звуков, гласные ш/а, п/во, է/е, է/э, ի/и, ու/у, словоформа, укорочение гласного, элизия, ассимиляция.

Изучая слова подвергшиеся фонетическим изменения в эпиграфике 12-16 веках, которые являются недавно замеченными высказываниями и не

нашедшие своего места в исследованиях предшествующего периода, заметили, что в одном случае они чужды не только среднеармянской литературе, но и эпиграфическим надписям, в другом случае, они подчеркивают ограничения, или являются упущениями в конкретной области своего применения.

Исследования показали, что древнеармянские гласные (а, во, е, э, и, у) в эпиграфике фонетически изменились из-за общепринятого языка местного народа, так же из-за слияния с иностранными языками, ещё из-за эпиграфиков, которые по разному понимали всякие особенности. Таким образом, гласная А/Մ подвержена фонетическому изменению в словоформах Միսդէ/ Севадэ (Арцах), Ռաք(ել)ին/ Рак(ел)ин (собственное имя Аракел), կրաւնոնրացն/ кравнуворацн, մոհր/ могр (территория Украины), Շնֆոփ/ Шнофор, տաւաճան/ тпанс (Россия), Մճոկաճոռն/ Мчркацоро (Вайоц Дзор); гласная ВО/Ո в словоформах կաթուղիկէ/ катугикэс, Էւասափ/ Эвасап (Лори), ծնունդ/ цнугац (Украина); гласная Е/Ե в словоформах Գոհարմիլիք/ Гоармликс (Лори), гласная Э/Է Վառվառին/ Варварин (Украина), Անդրիաս/ Андриас (Горис); гласная У/Ս in словоформах յինվարին/ йинварин (Украина) и հեծիլի (Лори).

Вышеперечисленные словоформы являются закономерными не только в эпиграфике, но и для среднеармянского языка, так как в эпиграфических надписях имеют или локальное, или временное ограничение. Судя по примерам, сохранившимся в эпиграфических надписях, гласные изменены в обиходно-разговорных выражениях или являются результатом опущения эпиграфиста. Чередование гласных происходило не только в именах собственных, но и нарицательных.

Gayane Chopuryan

Phonetic change of vowels on the 12-16th century Armenian lithic inscriptions

Conclusion

Key words and expressions: phonetic change, vowels а (u), о (n), е (t), е (t), i (h), and u (n), word form, vowel shift, vowel reduction, conversion to another sound.

Having studied the words on the lithic inscriptions of the 12th-16th centuries that underwent phonetic changes, which are recently noticed expressions and were not investigated by the researchers of the previous period, we noticed that on the one hand they are characteristic neither to the Middle Armenian literature, nor to the lithic inscriptions. On the other hand they can be

considered as limitations or omissions in their specific field of application. They have undergone phonetic changes not only in proper, but also in common names.

It becomes clear from the study that the vowels of old Armenian (ա, ն, է, է, ի, ու) have been phonetically changed in the protocols due to the penetration of the folk language, the interaction of other languages and the peculiarities of the recorders' perception of some linguistic realities.

Thus, the vowel A (Ա) has undergone a phonetic change in the word forms Sevade/ Սևադէ (Artsakh), Rak(el)/ Ռաք(ել)ին (Arakel- personal name), Kravnuoratsn/ կրաւնուորացն (Ukraine region), Shnofor, տրանս/ Շնոֆոր, տաւանս (Russia), Mchrkadzoro/ Մճոկաճորո (Vayots Dzor); Takrpetoc/ տակրպետոց (Lori); Vowel O (Օ) in the word-forms of Katughikes, Evasap/ կաթուղիկէս (Lori), Tsnughac/ծնուղաց (Arcakh); Evasap/ Էւասափ (Lori) the vowel E (Ե) in the word-forms Goharmliks/ Գոհարմլիքս, Baraykendanin/ Բարայկենդանին (Lori); the vowel E (Է) in the word-forms Varvarin/ Վարվարին (Ukraine), Andrias/ Անդրիաս (Goris); the vowel U (Ու) in the word-form yinvarin/ յինվարին (Ukraine) and hejips/ հեճիպս (Lori); and the vowel U (Ու) in the word-form Bardaghemosi/ Բարդաղէմոսի (Lori).

The mentioned word forms are characteristic neither to lithic inscriptions, nor to Middle Armenian, because on lithic inscriptions they have either a local or a temporal limitation. Judging by the examples preserved on the stone inscriptions, the vowels were changed in colloquial expressions or are the result of omission by the recorder (inscriber).

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է., Բացատրական բառարան, 1976, հ. 2: http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%B4%D5%B8%D5%B0%D6%80
2. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Եր., 1942:
3. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:
4. Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Եր., 1973:
5. Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986:
6. Ղազարյան Ս., Միջին հայերեն, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960:
7. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009:
8. Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Եր., 1953 <http://tert.nla.am/archive/armbook/hay%20barbaragitutyun-1953.pdf>:

9. Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Եր., 1982:
10. Մուրհանդակ Բիզանդեան, լրագիր տեղութեանն Օսմանեան, <https://arar.sci.am/dlibra/publication/296162/edition/271778/content>
11. Աւգերեան Հ., Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, Հ. 2 ՆՀԲ:
12. <http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=26>

Աղբյուրագիտական ցանկ

Դիվան հայ վիմագրության, 1960, Պ. 2, Գորիսի, Միսիանի և Ղափանի շրջաններ (Գլխ. խմբ.՝ Հ. Օրբելի, հատորի խմբ. Բ. Առաքելյան), Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 242:

Դիվան հայ վիմագրության, 1967, Պ. 3, Վայոց Ձոր, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան) Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 430:

Դիվան հայ վիմագրության, 1982, Պ. 5, Արցախ (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 348:

Դիվան հայ վիմագրության, 1996, Պ. 7, Ուկրաինա, Մոլդովա (Կազմ.՝ Գ. Գրիգորյան), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 410:

Դիվան հայ վիմագրության, 2012 Պ. 9, Լոռու մարզ (Կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ.Ղաֆադարյան, Ս. Սաղումյան), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 612:

Խմբագրություն է ուղարկվել 10.07.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 11.08.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.